

ՖՐՄՄԿ Մեկնաբանություն 10

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և արժեզրկում

Հղումներ

- ՀՀՄՍ 34 Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ
- ՀՀՄՍ 36 Ակտիվների արժեզրկում
- ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը

Նախապատմություն

- 1 Կազմակերպությունից պահանջվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատել գուղվիլի, սեփական կապիտալի գործիքներում ներդրումների և սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը և, եթե անհրաժեշտ է, այդ ամսաթվով ճանաչել արժեզրկումից կորուստ՝ համաձայն ՀՀՄՍ 36 և ՀՀՄՍ 39 ստանդարտների: Սակայն հնարավոր է, որ հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջում պայմաններն այնպես փոփոխված լինեն, որ արժեզրկումից կորուստը կրճատվեր կամ տեղի չունենար, եթե արժեզրկման գնահատումը իրականացվեր միայն այդ ամսաթվով: Սույն մեկնաբանությունը տրամադրում է ուղեցույց, թե արդյոք տվյալ տեսակի արժեզրկումից կորուստները երբևէ պետք է հակադարձվեն, թե ոչ:
- 2 Սույն մեկնաբանությունը դիտարկում է ՀՀՄՍ 34-ի պահանջների և ՀՀՄՍ 36-ում գուղվիլի արժեզրկումից կորստի ճանաչման և ՀՀՄՍ 39-ում որոշ ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի ճանաչման պահանջների միջև փոխկապակցվածությունը, և այդ փոխկապակցվածության ազդեցությունը հաջորդ միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հարցադրում

- 3 ՀՀՄՍ 34-ի 28-րդ պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը կիրառի միևնույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը իր միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Այն նաև սահմանում է, որ «կազմակերպության հաշվետվությունների հաճախականությունը (տարեկան, կիսամյակային կամ եռամսյակային) չպետք է ազդի դրա տարեկան արդյունքների չափման վրա: Այդ նպատակին հասնելու համար միջանկյալ հաշվետվությունների պատրաստման նպատակով չափումները պետք է կատարվեն «տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը» հիմունքով»:
- 4 ՀՀՄՍ 36-ի 124-րդ պարագրաֆը սահմանում է, որ «Գուղվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը ճպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում»:
- 5 ՀՀՄՍ 39-ի 69-րդ պարագրաֆը սահմանում է, որ «որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքում ներդրման գծով շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները չպետք է հակադարձվեն շահույթի կամ վնասի միջոցով»:
- 6 ՀՀՄՍ 39-ի 66-րդ պարագրաֆը պահանջում է, որ սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը (օրինակ՝ բաժնային չգնանշվող գործիքի արժեզրկումից կորուստը, որը չի հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրա իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել) չպետք է հակադարձվի:
- 7 Սույն մեկնաբանությունը քննարկում է հետևյալ հարցադրումը՝
Պետք է արդյոք կազմակերպությունը հակադարձի միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված գուղվիլի, բաժնային գործիքներում ներդրումների և սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստները այն դեպքում, եթե այդ կորուստները չէին ճանաչվի, կամ կճանաչվեին ավելի փոքր չափով, եթե արժեզրկման գնահատումը տեղի ունենար միայն հաջորդ ժամանակաշրջանի վերջում:

Փոխհամաձայնություն

- 8 Կազմակերպությունը չպետք է հակադարձի նախորդ միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված գուղվիլի, կամ բաժնային գործիքներում ներդրումների, կամ սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը:
- 9 Կազմակերպությունը չպետք է այս փոխհամաձայնությունը համանմանորեն տարածի ՀՀՄՍ 34-ի և այլ ստանդարտների միջև հնարավոր տարաձայնությունների առարկա հանդիսացող այլ հարցերի վրա:

Ուժի մեջ մտնելը և անցումը

- 10 Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2006 թվականի նոյեմբերի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ավելի վաղ կիրառումը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը սույն մեկնաբանությունը կիրառման մեջ է դնում 2006 թվականի նոյեմբերի 1-ից առաջ, ապա այն պետք է բացահայտի այդ փաստը: Կազմակերպությունը պետք է սույն մեկնաբանությունը առաջընթաց կիրառի գուղվիլի նկատմամբ այն ամսաթվից, երբ առաջին անգամ կիրառման մեջ է դրել ՀՀՄՍ 36-ը: Կազմակերպությունը պետք է սույն մեկնաբանությունը առաջընթաց կիրառի բաժնային գործիքներում ներդրումների և սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նկատմամբ այն ամսաթվից, երբ կիրառման մեջ է դրել ՀՀՄՍ 39-ի չափման չափանիշները: